

Ս Ի Ո Ն

ԻԱ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1947

ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՒ 1

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՔՍԱՆԱՄԵԱԿ ՍԸ

Սովորութիւն դարձած, կամ ճոխ արդիւնքներով հանդիսաւոր իրաւունքի մը զգացումը չէ որ կանգ առնել կուտայ մեզի Սուրբ Աթոռոյս Պաշտօնաթերթ Սիոնի քսանամեակին շուրջ, այլ յարգանքի պարտականութիւն մը հանդէպ այն մեծ հոգիներուն, որոնք սկզբնաւորեցին և առաջ տարին զայն, մերթ արդիւնաւէտ և մերթ վարանոտ, և սակայն միշտ ծառայութեան մը ոգիով և բարի փափաքներով:

Կը խոստովանինք թէ սկզբնաւորուած գործը միշտ նոյն թափով և արդիւնաւորութեամբ չընթացաւ, կարելի չեղաւ թերեւս ամբողջապէս իրականացնել Կոնական, Գրական և Բանասիրական այս հանդէսին նպատակը, սակայն գոհունակօրէն կը նայինք արդիւնաւորուած տարիներուն: Եթէ չենք յաջողած բովանդակօրէն ընել այն ինչ որ պարտ էինք ընել այս հանդէսով, չենք թերացած նոյն ատեն ընելէ ինչ որ մեր պարտքն էր ընել: Կարելի՞մ է եթէ ոչ ցանկալիք, այս է եղած Սիոնի ճիշդ քսան տարիներու ընթացքին և ժամանակի չարիքին ու բարիքին յամընթաց: Պարզ, եթէ Սիոնը, ըստ ամենայնի, չկրցաւ պանծացնել իր նպատակը, կրցած է արդարացնել սակայն իր գոյութիւնը:

Սիոնի նոր շրջանը կը սկսի Դուրեան Պատրիարքի օրով, իբրև օժանդակ կրթական և վերանորոգչական այն մեծ գործին՝ որ իրմով սկզբնաւորուեցաւ Սիոնի այս բարձունքին վրայ: Դուրեան Սրբազանը Հայ Երուսաղէմի պատրիարքութիւնը ստանձնած էր կատարելու համար ճշուրդ վրէժխնդրութեան մը գործը՝ ինչպէս ինքը սովոր էր ըսել: Նիւթական բախտորոշ միջոցներ, Տնօրինական Ս. Տեղեաց խորհուրդը, և վանքին՝ բաղմադարեան և ազգային սրբութեանց զգացումը կը պատրաստէին արդէն կրօնական ու կրթական բարգաւաճ ձեռնարկի մը մտածումը: Ժառանգաւորաց վարժարանի վերակազմութիւնը, Սրբոց Յակոբեանց տպարանի վերաբացումը և Սիոնի նորոգ հրատարակութիւնը իրագործումներ եղան այդ մեծ մտածումին:

Միջավայրի կրօնազգաց միջոցաւոր, ժամանակի պահանջները և ձեռնասանձերը՝ (Դուրեան Պատրիարք, Բաբգէն Եպիսկոպոս, որ Սիոնի առաջին չորս տարիներու քիփորձ ու կարող խմբագրապետը եղաւ, Մեսրոպ Սրբազան, ապա

Թորգոմ Պատրիարք, որուն օրով Սիոն իր ամէնէն փառաւոր շրջանը բոլորեց) կարելի և արդիւնաւոր ըրին Ս. Յակոբայ Պատրիարքութեան Պաշտօնաթերթի հրատարակութիւնը, և Սիոն այդ օրերուն՝ բովանդակ սփռուքի հայութեան ակնկալութեան, գորովի ինչպէս հպարտութեան առարկան եղաւ: Մեսրոպ Պատրիարքի շրջանին Սիոն շարունակեց հաւատարիմ մնալ ինքզինքին, հակառակ ներքին և արտաքին դժբախտ բերումներուն: Եւ այսօր քսանամեակ մը վերջ, երբ կը նայինք Սիոնով կարելի եղած արդիւնքին, զոհոնակութեան զգացում և երախտագիտութիւն ունինք միայն հանդէպ անոնց՝ որոնք ջանացին և նիւթեցին մտքի այս գործը, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ ոգին և ուղղութիւնը բացատրող ու տարածող, Աւետարանէն բխող խաղաղիկ և փրկարար ներշնչումներ բաշխող և մեր եկեղեցագիտական և բանասիրական հարցերուն կարևոր լուսաբանութիւններ բերող գործունէութեամբ, իր որոշ արժէքն ու տեղը ունեցաւ և ունի հայ մամուլին մէջ:

Սիոն իր առաջին թիւին առաջին էջը գաղափարող պաշտօնադրին համեմատ, պիտի ըլլար առաւելապէս կրօնական, բանասիրական և որոշ չափով միայն զրական հանդէս մը: Գոհացում տալ հոգևոր այն պէտքին՝ զոր զգացեր է ու կը զգայ միշտ մեր ժողովուրդը, ու Աւետարանէն բխած ներշնչումներ տանելու նաև անոնց՝ որոնք իմաստութիւն ունեցեր են միշտ, իրենց մտքի բոլոր հայեցողութիւնները ներդաշնակ պահել մարդկային զգացումներու ամէնէն նուիրականին, կրօնի հրամայականներուն հետ:

Կրօնաբարոյական նիւթերէն զատ՝ Սիոն պիտի ջանար մշակել նաև տոհմային հին մատենագրութիւնը, և հայ եկեղեցագիտական և բանասիրական հարցերուն բերել իր կարելի լուսաբանութիւնն ու բաժինը: Հոս անհրաժեշտ է դիտել տալ թէ Սիոնը իր այս յառաջադրած վերադիրներէն ոչ մին ուղեց ամբողջապէս ըլլալ: Անիկա ոչ զրական թերթ մըն է բառին մասնագիտական առումով, ոչ բանասիրական հանդէս մը՝ բառին ակադեմական հասկացողութեամբ: Իբրև Երուսաղէմի Պատրիարքութեան Պաշտօնաթերթ, անիկա հանդէս մը ըլլալէ աւելի, հաստատութիւն մը, դպրոց մը և ոգի մըն է, ուր օգտակար, տոհմիկ և բարձրացնող բոլոր տեսակի նիւթեր իրենց տեղը ունին, և կրօնական ու իմացական սնունդին հետ միասին զոհացնել կը ձգտին ազնուագոյն ճաշակները: Սիոնի բոլոր գրիչները առանց բացառութեան տէրն եղան իրենց նիւթերուն:

Սիոն կրօնաթերթը իրեն գրիչ ունեցաւ վերջին շրջանի մեր Եկեղեցւոյ և ազգային մեծագոյն գէմքերը, որոնք խորունկ ճանաչողութիւնը մշակել էին ամենալուրջ պատրաստութեամբ Հայ Եկեղեցւոյ և հայ պատմութեան մեծատարած յղացքներուն: Հասարակ քարոզներու, սովորական գիտելիքներու և հրահանգութիւններու չէ որ կը հանդիպինք հոն, այլ ազգային բարձր ոգիով և Աւետարանի իմաստութեան ներշնչեալ գրութիւններու: Հոն աստուածաբանական, Ս. Գրոց մեկնութեան, քրիստոնէական բարոյագիտութեան վերաբերեալ ամէն գրութիւն Եկեղեցիի կեանքին մէջ ապրուած կրօնքին ուսուցումն է որ կը պատմէ:

Սիոնը իր ծրագիրն ու մեթոտը ունեցաւ, ոչինչ կայ հոն պատահական կամ ըստ հանդիպման առնուած. ընդհակառակն ամէն ինչ կանխաւ յանձնաբարուած ու սերտուած ըլլալու տպաւորութիւնը կուտան ընթերցողին: Գրա-

կանութիւն չէ հանդէսին մտահոգութիւնը, բայց իր պահանջը եղաւ մաքուր հայերէնը և ազգային ու կրօնական ոգի։ Սխռն երբեք չընդունեց արգահատելի գրուածքներ՝ որոնց ուրիշ թերթերը շատ յաճախ այնքան լայն կը բանան իրենց էջերը։

Ամէն թիւ ունեցաւ և ունի իր խմբագրականը, ուր այնքան լայն և մագիստրոսական շունչով ու հասկացողութեամբ եկեղեցական և հասարակական հարցեր մշակուեցան։ Սխռնի բոլոր խմբագրականները այնքան յաջող իրենց նիւթին ընտրութեամբ, շինիչ և ուսուցանող հանգամանք մը ունին և խիստ համապատասխան կրօնաթերթի մը կամ պատրիարքութեան մը պաշտօնական հրատարակութեան լրջութեան։ Վասնզի Սխռն առաջին օրէն ունեցաւ ժողովրդական խորունկ ճանաչողութեամբ վարպետ հրապարակագիրներ, յանձին Բաբգէն Եպիսկոպոսի և Թորգոմ Պատրիարքի։ Նրկուքն ալ իրենց փորձառութեան քուրային մէջ ձուլուած տեսութիւններ ու հայեացքներ ունէին մեր ժողովուրդին և Եկեղեցիին կացութեան և բարեօրոյն և բարձրացման համար, և կը ներկայացնէն ողմիտ, հեռատես, իմաստուն կարծիքներ, իբր հասուն խորհրդածութիւններ մարդերու՝ որոնք մեր անցեալը խորապէս ուսումնասիրած և մեր ներկան իրենց համապարփակ պատկերին մէջ տեսած ու ճանչցած էին։

Բաբգէն Եպիսկոպոսի խմբագրութեան շրջանին, Սխռն աւելի ճոխ է իր բանասիրական, կրօնական և պատմական նիւթերով, վասնզի այդ շրջանը կը պայմանաւորուի այդ նիւթերու մեծ վարպետներէն։ Դուրեան Սրբազանի «Բառազնական դիտողութիւնները» իր «Մանդակունւոյ ճառերուն մէկ նոր ձեռագիրը», «Մեր թարգմանիչներու կարծեցեալ եբրայագիտութիւնը» և «Նկատողութիւններ Եգիպտի աստուածաշնչական վիպութիւններու մասին» աշխատութիւնները, իբր քննադրական նկատողութիւններ՝ ձեռագրաց բաղդատութեամբ կատարուած, ունին լայն ու խոր հմտութեան և լուսաւոր հասկացողութեան կնիքը, ուր կ'երեւի ներկուռ բանասէրն ու հայագէտը՝ իր սուր դիտողութիւններով, հանճարեղ մտածողութեանց և գրական շնորհի տուրքերով։

Իսկ «Աստուածայայտնութեան Խորհուրդի» շուրջ իր կրօնական և հոգևոր կեանքի մասին աւետարանական խորհրդածութիւններու շարքը՝ իրենց գրական յօրինուածքով և կրօնական տաք շունչով, պիտի մնան մեր կրօնական գրական նութեան անստղծ յմոյշներէն։

Գառնիկ Ֆնտզեան, իր «Վարք Մաշթոցի» ուսումնասիրութեամբ, Ֆրէտերիք Յ. Մուրատ իր «Նշխարք նախնեաց մատենագրութեան» և «Պարապմունք ի Սուրբ Գրիոր Նոր Կտակարանի» աշխատութիւններով և Ն. Ալբալեան իր «Բանասիրական մանրուք» նկատողութիւններով, այդ օրերու Սխռնը կը վերածէին պատմա-բանասիրական հպարտ բեմի մը, ուր հայերէնի հին և նոր լեզուական երևոյթներու պատկանող դիտողութիւններ և կուսումներ, մատենագրական համեմատութիւններ ու ճշտումներ և ստուգապէս քրիստոնէական ոգիով կատարուած ուսումնասիրութիւններ, հմտութեամբ և ոգիով լի, նրբախոյզ դատումի և նուաճումի զեղեցիկ նմոյշներ պիտի մնան։ Յիշուած հեղինակները որքան հմտութեան՝ այնքան ալ հաւատքի մարդեր, թէ և արդիական գիտութեան ճրագով՝ բայց հին գգաստ իմաստունի գգացումով է որ կը կատարեն խուզարկումի իրենց գործը։

Իսկ Մ. Եպս. Աղաւնունիի «Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Ս.

երկրի մէջ» աշխատասիրութիւնը, ամենագեղեցիկ մէկ նմոյշն է պաղեստինագիտութեան, որ Ս. Գրոց քննաբանութեան և ընդհանուր եկեղեցական պատմութեան հնախօսական բաժնին ամէնէն կարևոր ճիւղերէն մին է այլևս, և որ շնորհիւ Բրիտանական հոգատարութեան Պաղեստինի վրայ, Երուսաղէմի մէջ և շուրջ, Գալիլիոյ մէջ, Յորդանանի անապատին զանազան կէտերուն վրայ և այլուր ամէն կողմ, տեղի ունեցան պեղումներ և Գոմինիկեան ու Յրանչիսկեան Միաբանութեանց և մասնաւորաց ջանքերով մարմին առաւ հսկայական գրականութիւն մը, որ կ'ընդգրկէ Աստուածաշունչի գիտութեան, Պաղեստինի աշխարհագրութեան և հնախօսութեան, երբայրաբանութեան, Խորայէլի պատմութեան, Հին և Նոր Կտակարաններու ըմբռնումը դիւրացնող ազգաբանական, ժողովրդագրական և կրօնապատմական խուզարկութեանց բոլոր մանրամասնութիւնները։ Այս մեծ և ընդհանուր շարժումին մեզի հաղորդ կ'ընէ Մ. Եպս. Աղաւնունին, որ բարեխիղճ երկայնատութեամբ հաւաքած է շատ բան, ինչպէս մեր հին մատենադրութեան և ընդհանուր եկեղեցական գրականութեան մէջէն՝ այնպէս ալ նոր պեղումներով երևան եկած փաստերով և յայտնութիւններով, ջանացած է կազմել կարելի ծանօթութիւններու շարքը Ս. Երկրի մեր սեպհականութեանց մասին։

Բարեկէն Եպս. որ աւելի քան հինգ տարիներ իր գերազանց ուսուցչիյն, Դուրեան Պատրիարքի աջ բազուկն ու հաւատարիմ գործակիցը եղաւ Երուսաղէմի վանքի մտաւորական վերակազմութեան մէջ, իբրև խմբագրապետ Սիոնի, զայն իր առաջնորդներով կրօնաբարոյական և պատմագիտական յօդուածներով զարդարեց ու փառաւորեց ամէնէն աւելի։ Իր խորին համոզումն էր թէ Աստուած մեր երկնիկ և քաջ նախնեաց ձեռքով սքանչելի գործեր, հրաշքներ կատարած է մեր անցեալին մէջ, իր ճակատագրի բարձրութեան վրայ բռնելու համար մեր ազգը, իր մշակած կրօնաբարոյական գրականութեան մեծագոյն ձիգն է եղած ցուցնել այդ խորհուրդը։ Այս է գաղափարը որու առանցքին շուրջ կը դառնան իր բոլոր տեսութիւնները։

Հայաստանեայց եկեղեցին անոր մտքին առջև պատմութիւն մը՝ յաջորդութիւններու շրջան մը ըլլալու չափ ու աւելի, այժմեական դառ մըն է, որքան անհանձն զբօշ մը որ կախ մնաց մեր կործանումներուն վերև դարեր ու դարեր։ Այդ մտատեսիլին իբրև արգասիք կը մնան Սիոնի էջերուն վրայ իր «Պետութիւն և եկեղեցի» և «Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ խնդիրները» ու նման անդրադարձումները մեր անցեալի ու ներկայի կեանքին շուրջ։

Իսկ «Դասեր Աւետարանէն» իր անսթեկեթ, թէև միշտ գրականօրէն պարկեշտ կերպով յարգարուած, ու շիտակ գաղափարին զացող քարոզները կրօնական պերճախօսութեան նմոյշներ են, որոնց առաջնորդող մտածումն է կեանքի իսկութեան՝ մէկ որոշ իմացութիւնը և արժեւորումը։ Կեանք՝ իր առօրեայ և գործնական իմաստով, կեանք՝ իր ազգային, մտաւոր և հոգևոր հասկացողութեամբ և վերջապէս կեանք՝ իր աստուածային ըմբռնումով։ Իր խօսքը այսպէս՝ կեանքին քարոզն էր ամէնէն աւելի՝ ու այդ իսկ պատճառով կ'անցնէր ժողովուրդին, դէպի անոր սիրտը իրեն ճամբայ բանալով երբեմն։

Թորգոմ Պատրիարքի օրով Սիոն աւելի զուսպ և գոյտը նկարագիր մը հազաւ, իր մագիստրոսական խմբագրականներէն սկսեալ, մինչև իր կրօնական

մտածողութիւնները, մինչև իր խնամուած զբախտականներն ու մահազրականները և խմբազրական ներքին աշխատանքին մաս կազմող օրուան մարդոց և դէպքերու անդրադարձումները, ունին ինքնայատուկ տեսութիւններ և դատումներ՝ որոնք խիստ շահեկան կը դարձնէին իր արտայայտութիւնները :

Սիռն իբր կրօնաթերթ, զբաղած է առհասարակ կրօնական և եկեղեցական հարցերով և Թորգոմ Պատրիարքը կրցաւ թերթին տալ այդ ձգտումը : Մասնաւորաբար Սիռնի մէջ ուշագրաւ տեղ մը ունին իր քարոզները և տօնադիտական յօդուածները, որոնք յաճախ իր խմբազրականներուն լրացուցիչներն էին : Եօթը տարիներ շարունակ անկիա Սիռնը լեցուց իր գրչի և մտքի բազմակերպ շնորհներով : Իրեն համար թերթը լրացուցիչ մասն էր դաստիարակութեան, կրթարանը՝ ուր պիտի փայլէին միտքն ու գրիչը, սիրտն ու հոգին ապագային համար պատրաստողներուն : Այս գետնին վրայ ան կը մնար անհուճ, բազմակողմանի, խոր և օրինակելի. գրելը խօսելու հետ գուզընթաց և իր կեանքի անզանցառելի անհրաժեշտութիւնը եղաւ, զինք իր մեծութեանը հանող գոյգ թեւեր :

Շահեկան է հոս յիշատակել նաեւ իր կրօնական թարգմանութիւններէն զլիաւորաբար Ժ. Պ. ի «Յիսուսի ուսուցումը ըստ համատեսականներու» որ անաւարտ մնաց : Իսկ իր «Իրիմեան Հայրիկ»ին և «Եղիշէ Պատրիարք Դուբեան»ի նման գործ մը ըլլալու սահմանուած էր Բաբգէն Կաթողիկոսի կենսազրական նօթերը, որ դժբախտաբար անաւարտ մնաց :

Թորգոմ Պատրիարքի օրով Սիռնի գրական բաժինը աւելի ճոխացաւ : Նախ ինքը, պատրիարք ըլլալէ առաջ և յետոյ, Սիռնի մէջ հրատարակութեան տուաւ բազմաթիւ ինքնագիր և մանաւանդ թարգմանածոյ քերթուածներ : Յետոյ Արսէն Երկաթ, Վահէ-Վահեան, Եղիվարդ, իսկ այս ամէնը համաձուլող և մթնոլորտող մեծ վարպետը, Օշական, իր «Սաղիմական»ով, «Երբ պզտիկ են», «Հրաշքը», «Այն օրերուն», «Աստուծոյ շունչով», «Երբեմն», «Մոռցուած բաներ», «Երբ հինները կը կարգանք» և նման արտայայտութիւններով Սիռնին կը բերէր վճռապէս զրական իր կնիքը : Նորութիւն մըն էր նոյն ատեն խորհրդագրաց իմաստասիրութեան փորձը զոր Շ. Ռ. Պէրպէրեանի գրիչը իրագործեց և Պատանական տիալոգի և Պերկսոնեան թափանցումի կրկնակ շնորհներով : Իր խորհուրդներու շարքը աւելի քան նորութիւն մըն է, գեղեցիկ նմոյշ մը իմաստով տրոփուն արձակի :

Հոս կ'արժէ անդրադառնալ այն երիտասարդ սերունդին՝ որ ուղղակի կը բխէր երեք մեծ եկեղեցականներու ոգիէն, Կիւրեղ Վարդապետ, Տիւրան Վարդապետ, Նորայր Վարդապետ, Սիոն Վարդապետ, Պարզեւ Վարդապետ, Հայեղազուն Վարդապետ, Սերովբէ Վարդապետ, Շաւարշ Վարդապետ, Եղիշէ Վարդապետ, Հայրիկ Վարդապետ, Պսակ Վարդապետ, Ա. Վ. Հատիտեան, Գրիգոր, Բաբգէն, Թորգոմ, Յակոբ, Խաւակ Աբեղաները աւելի կամ նուազ չափով հմտութիւն, տաղանդ և կարողութիւն երևան բերին Սիռնի այս քառամասեակ հերկին մէջ, ոմանք տիրական, ուրիշներ խուզարկու և եռանդաւոր իրենց իմացականութիւնը ձեռնհասօրէն փորձելով բազմատեսակ նիւթերու վրայ, եկեղեցական հմտութենէն մինչև բանաստեղծական նորօրինակ յղացքներ :

Եթէ բանասիրական յօդուածներ Թորգոմ Պատրիարքի գրչէն շատ քիչ

ելաւ, որոնք շատ հաշտ չէին գար իր խառնուածքին. միւս կողմէն սակայն իր շրջանին Սիոնը ունեցաւ պատմաբանասիրական աշխատանք կատարող շու մասնագիրներ:

Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան իր «Վախթանգ Որդի Ումեկայ ու նրա տոհմը», և «Հաղբատի դպրոցի մի գլուխ գործոց» երկասիրութիւններով, Մեսրոպ Մագիստրոս իր «Պատմական տեղեկութիւններ Հայաստանի հողերի ոռոգման մասին», Աճառեան «Պատմութիւն Հայերէն Լեզուի» գործերով, Աղոնցի պատմական տեղեկագիրները, պատմական ու բանասիրական ճշտութեամբ անդրադարձութեամբ, և Ա. Ալպոյաճեան «Գրիգոր Կեսարացի պատրիարքը և իր ժամանակը» պատմական գործով, մեր մեծ երկասիրողներն ու պատմաբանասէրներն այսպէս քով քովի կը բերէին, իրենց որքան կարևոր նոյնքան հմտալից այս աշխատութիւններով, Սիոնին ընծայելով բացառիկ վարկ մը և լուրջ հանդիսարանի մը հմայքը մեր անցեալի վերակերտութեան:

Թորգոմ Պատրիարքի մահէն վերջ Սիոնի գործը շարունակուեցաւ Դուրեանի և իր աշակերտներու խումբի մը կողմէն, հովանաւորուած Թորգոմ Պատրիարքի յաջորդ լուսահոգի Մեսրոպ Սրբազանէն, որ հակառակ իր անառողջ վիճակին և վանքի ներքին տաղանայներուն՝ ինչպէս նաև արտաքին աշխարհէն պատերազմով ստեղծուած դժուարութեանց, իր ջանքը չխնայեց Սիոնը կանգուն պահելու: Ոչ միայն պատրիարքական հովանաւորութեամբ մը գոհանալով, այլ և անոր տրամադրելով իմացական աշխատանքի լուրջ արդիւնքներ, քսանամեակի սկզբնաւորութենէն մինչև իր մահը:

Նոյն այդ ոգին է որ կը մղէ Սիոնի շուրջ վառ պահելու խանդը, Մեսրոպի յաջորդ Կիրեղ Պատրիարքի, աւելի երիտասարդ ու ջերմ հոգածութեամբ:

Այս շրջանին գլխաւոր աշխատակիցներ կը ներկայանան Արտաւազդ Արքեպիսկոպոս, Հ. Ն. Ակինեան, Օշական, Շ. Ռ. Պէրպէրեան, Եղիշէ Վարդապետ, Ծովական, Պարզ և Վարդապետ, Թորգոմ Արեղայ և ուրիշներ: Պատերազմը և կարգ մը ներքին դժուարութիւններ արգելք եղան որ Սիոնը կարենար նախկին թափով իր ընթացքը շարունակել, և սակայն հակառակ այս բոլորին անհկա չդադրեցաւ իր գոյութիւնը արդարացնող ճիգէն:

Նախորդ և վերջի շրջաններուն, ֆինայուն և գլխաւոր աշխատակիցներէ զատ, Սիոնի իրենց մասնակցութիւնը բերած են նաև Դևոնդ Եպս. Դուրեան, Երուանդ Եպս., Վահան Թէքէեան, Գ. Մխալեան, Արշակ Սաֆրաստեան, Յակոբ Անտոնեան, Խ. Պ. Քարտաշ, Գարեգին Եպս. Տրապիզոնի, Յակոբ Դալիր, Վաչէ Սրապեան, Ակիւլինէ, Մ. Նուպարեան, Լևոն Էսաճանեան, Մ. Տամատեան, Եղուարդ Գօլանճեան, Հրաշ Քալարեան, Մ. Ս. Կիրճեան, Ն. Կատար, Ալիք և Անել: Իրենց մասնակցութիւնը բերած են նաև մեր յայտնի պատմաբանասէրներէն Կ. Յ. Բամաճեան, Գէորգ Մըսրիլեան, Սիրարփի Տէր Ներսէսեան, Գ. Մամուր Փաթիմի, Յ. Քիւրտեան և Վ. Մելիքեան:

Այնպէս որ քսան տարիներու Հայ Երուսաղէմի մտաւորական կեանքը պայծառացնող այս ձեռնարկին թէ զաղափարական և թէ գործին պատիւը կ'երթայ անոնց միայն՝ որոնք ստեղծեցին և ձեռնհասօրէն վարեցին զայն: Անոնց յիշատակին հանդէպ երկիւղած, կ'ուզենք որ անոնց պատկանի միշտ պատիւը յառաջիկայի եւս ամէն յաջողութեանց:

Վերջացնելէ առաջ այս հարկադրաբար ամփոփ վերհաղումներն ու վերյիշումները, պարտք կը զգանք յիշեցնելու որ Սիւնը մասնագիտական բեմ մը չէր, և չի կրնար ըլլալ, պարզ այն պատճառով որ անոր յառաջադրութեանց գերազոյնը ուղղակի կրօնական սպաս մըն է, նորընծայ եկեղեցականներու միտքն ու գրիչը սրցնող մարդավայր մը: Եթէ անոր մէջ երեւցած են մեծ անուններ պատասխանատու գրութիւններու ներքեւ, ատիկա մտահոգութիւնն է տեսակ մը մտատիպար, տեսիլ՝ որուն պէտք է ձգտին բոլոր անոնք՝ որոնք Ս. Յակոբի ճամբով պիտի իջնեն այս ժողովուրդի մշակոյթի վերլուծումին և վերբերումին: Ահա թէ ինչու մեր ըրածը առանց խորանարդելու, կը հաւատանք մանաւանդ մեր ընելիքին: Սիւնը բեմ մըն է ամէնէն առաջ Ս. Յակոբեանց եկեղեցականներուն, բայց միևնոյն ատեն բոլոր անոնց՝ որոնք մեր պատմութեան, գրականութեան և մշակոյթին շուրջը ըսելիք նոր բան մը ունին:

Այս վստահութեամբ է որ կը բանանք երկրորդ քսանամեակը, լիայոյս թէ մեր ներքին ինչպէս նաեւ արտաքին աշխատակիցները իրենց լաւագոյնը պիտի տրամադրեն իրենց սիրելի այս հանգէսին:

Սիւնի այս քսանամեակի առիթով մեր խորին շնորհակալիքը կը յայտնենք բոլոր անոնց՝ որոնք իրենց մտքի և սրտի տուրքերով ճոխացուցին հանդէսը և կարելի ըրին ու ապահովեցին իր հրատարակութիւնը: Շնորհակալութիւն մեր պատուարժան աշխատակիցներուն և մեր ազնիւ ընթերցողներուն: Որքան ատեն որ հայուն հաւատքը, հայուն ճունը, հայուն եկեղեցին և անոր նուիրական աւանդութիւնները հարուածներու կրնան ենթարկուիլ ներսէն ու դուրսէն, Սիւն իր բարձրագոյն կոչումին հաւատարիմ, պիտի հնչեցնէ իր ճշմարտութեան և արդարութեան, սիրոյ և եղբայրութեան ձայնը այս բարձունքէն:

Անոնք՝ որ անցեալին մէջ աշխատեցան Սիւնի համար և անոնք՝ որ այսօր իրենց խորհուրդը և ժամանակը կը նուիրեն անոր, ամէնքն ալ իրենց խորին գոհունակութիւնը կը գտնեն, վստահ ենք, այն մտածումին մէջ՝ թէ Սիւնի միջոցաւ կը ծառայեն մեր արժէքներուն և ժողովուրդին:

